ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

18 հոկտեմբերի 2016 թվականի N 04-Հ

ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Արարատի մարզի Ջրաձորի դիատոմիտի հանքավայրի դրական փորձաքննական եզրակացությունների արժանացած աշխատանքային նախագիծը և <Դիատոմիտ> ԳԱ>> ՓԲ ընկերության տնօրենի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 102/01 դիմումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. **<Դիատոմիտ> ԳԱ>> ՓԲ ընկերության՝ ՀՀ Արարատի մարզի Ջրաձորի դիատոմիտի հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման, 2012 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ՇԱԹՎ-29/065 թույլտվության մեջ կատարել փոփոխություն՝ տարեկան արտադրողականությունը սահմանել 12.0 հազար մ^3 դիատոմիտի մարվող պաշար, ընդհանուրը՝ 84.0 հազար մ^3, գործողության ժամկետը թողնելով անփոփոխ՝ 2022 թվականի նոյեմբերի 11-ը:**
2. ***Աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության պետին՝***

1) 2 օրվա ընթացքում սույն հրամանի 1-ին կետի համաձայն կատարել փոփոխություն ընկերության հետ 2012 թվականի հոկտեմբերի 31-ին օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-065 պայմանագրում և ծանուցել ընկերությանը հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու մասին:

2) ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացվելուց հետո 10-օրյա ժամկետում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թույլտվության, պայմանագրի փոփոխված փաստաթղթային տարբերակը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կհամարվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3. ***<<Հանրապետական երկրաբանական ֆոնդ >> ՊՈԱԿ-ի տնօրենին*** **– ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:**

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ